

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ԽԱՐԹՈՒՄ

Ապրիլյան եղեռնի վաթսունամյակի առթիվ, տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյան, Սուտանի հայոց եկեղեցական խորհուրդեն հրավեր ստացած ըլլալով, 23 ապրիլին գիշերը մեկնեցավ Խարթում նախագահելու և բանախոսելու հոն կազմակերպված հուշահանդեսին, ս. պատարագ մատուցանելու, հոգեհանգիստ կատարելու և դպրաց դասի չորս անդամներուն ուրարակրության աստիճան շնորհելու:

Օդանավակայանին մեջ սրբազանին դիմավորելու եկած էին Սուտանի հայոց հոգեվոր հովիվ տ. Օշական քհն. Աշըգյան, տեղվույն հայ գաղութի վարչության հարգելի անդամներ, գլխավորությամբ ժողովի ատենապետ Եդ. Ճիերճյանի և ժողովուրդի բազմություն: Այնուհետև սրբազանը առաջնորդվեցավ դեպի ազգային առաջնորդարանն ու հայոց եկեղեցին, ուր «Հրաշափառ»-ով մուտք գործեց և հոգևոր ուրախությամբ հաղորդեց, թե Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը հանձնարարած էր իրեն տանիլ մեր բարեպաշտ ժողովուրդին հայրական ողջույններն ու հայրապետական օրհնությունները Հայոց Հայրապետին:

«Ձեզի կբերեմ,—ըսավ սրբազանը,— Միածնի Իշման ս. խորանեն, մեր պատմական վանքերեն և եկեղեցիներեն, ինչպես նաև հայրենաբնակ ձեր եղբայրներեն ու քույրերեն բյուր ողջույն և օրհնություն»: Ապա «Պահպանիչ»-ով ավարտեցավ առաջին հանդիպումը:

Ազգային առաջնորդարանի դահլիճին մեջ տեղի ունեցավ ընդունելություն:

Հաջորդ օրը, տ. Զավեն եպիսկ. հյուրանոցի սրահին մեջ հանդիպում ունեցավ սուտանահայ գաղութի ցկյանս նախագահ Գրիգոր Պոտուրյանի հետ, ի ներկայության հոգեվոր հովիվ տ. Օշական քահանայի:

Ապրիլի 24-ի գիշերը, ժամը 8-ին, տեղի ունեցավ գիշերային ժամերգություն և ս. պատարագ, որու ընթացքին պատարագիչ տ. Զավեն եպիսկ. քարոզեց Ապրիլյան եղեռնի մասին, խորհրդածելով հավատքի և հայրենասիրության շուրջ, պատմելով հայ ժողովուրդի հարության և ծաղկյալ հայրենիքին ու հայ եկեղեցվո կեդրոն ս. Էջմիածնի մասին: Հրավիրեց գաղութի ժողովուրդը որ սիրով բոլորվին վարչության շուրջ և շրջահայեցությամբ ու նվիրումով լծվին եկեղեցասեր ու կրթանվեր աշխատանքի: Տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգստյան արարողություն: Ս. պատարագն ու հոգեհանգիստը ավարտեցան կեսգիշերին:

26 ապրիլին տեր և տիկ. Ժիրայր Կյումյուշյաններ ճաշկերույթով մը պատվեցին տ. Զավեն եպիսկոպոսը: Սույն հանդիպումին ներկա էին տ. Օշական քհն., գաղութային վարչության ատենապետն ու իր տիկինը, Սուտանի մոտ Եգիպտոսի լիազոր դեսպան տիար Սաատ ֆաթաթրի, Լիբանանի դեսպան տիար Պյուլենտ Պեյտուն, որոնց հետ օգտակար զրույց տեղի ունեցավ հայ և արաբ ժողովուրդներու եղբայրական հարաբերություններուն մասին:

Կիրակի, 27 ապրիլի, առավոտյան ժամերգութենեն ետք, Երևման ս. Խաչի տոնին առթիվ ս. պատարագ մատուցանեց տ. Զավեն եպիսկ. և «Հայր մեր»-են առաջ չորս երիտասարդներու որոնք ներկայացված էին

գաղութին կողմե ս. խորանին ծառայողներ, կիսասարկավագության աստիճան շնորհեց: Ապա օրվան տոնին առթիվ «Սուրբ խաչն օգնական հաւատացելոց» բնաբանով քարոզ խոսեցավ:

Կեսօրին սրբազանը հյուրը եղավ Սուտանի հայ գաղութին նախագահ տեր և տիկ. Գրիգոր Պոտուրյաններու տունը, ուր ներկա եղան տ. Օշական քհն.-ին հետ գաղութային ժողովի անդամներ և օգտակար զրույց ունեցան գաղութի հառաջիկա գործունեության վերաբերմամբ:

Երեկոյան ժամը 9-ին Խարթումի Հայ երիտասարդաց միության ակումբին մեջ տեղի ունեցավ Ապրիլյան եղեռնի 60-ամյակի առթիվ հուշահանդես: Գեղարվեստական հաջող հայտագիր մը իրագործվեցավ: Գլխավոր բանախոսն էր Զավեն եպիսկոպոսը, որը խոսեցավ ի պանծացումն բյուրավոր հայ նահատակներու, ի մխիթարություն մեր ժողովուրդին և ի հարատևումն հայոց անժամանցելի և արդար իրավունքներուն:

28 ապրիլի առավոտուն, ազգային առաջնորդարանին մեջ, սրբազանն ու տեր հայրը այցելությունը ընդունեցին եթովպական ուղղափառ քույր եկեղեցվո պատրիարքական փոխանորդին: Տեղի ունեցավ մտքերու փոխանակություն և երկու եկեղեցիներու միջև սերտ ու եղբայրական հարաբերություններու և համագործակցության մասին:

29 ապրիլին սրբազանը տեսակցեցավ գաղութային վարչության ատենապետ Եդ. Ծիերճյանի հետ, գաղութին կապերը ս. Էջմիածնի Մայր Աթոռին հետ ավելի սերտացնելու և առ այդ հոգևոր ճեմարանին օգնելու կապակցությամբ և ունեցավ օգտակար խոսակցություն:

Հինգշաբթի, մայիսի 1-ին, ս. եկեղեցվո վարչության հարգելի ատենապետ՝ տեր և տիկ. Եդ. Ծիերճյան իրենց բնակարանին մեջ ճաշկերույթ մը սարքած էին ի պատիվ հյուր սրբազան հոր որուն հրավիրված էին գաղութին մեջ գործող բոլոր մարմիններու անդամներն ու անդամուհիները, ազգային իշխանություն, տիկնանց միություն, երիտասարդաց վարչություն, ազգ. վարժարանի հոգաբարձություն ևն: Ընթրիքի ընթացքին տ. Զավեն եպիսկ. դրվատեց Խարթումի հայ համայնքի միասնական ոգին, արդյունավոր գործունեությունը, բոլորին զոհողության ոգին և բաժակ առաջարկեց հոտնկայս Ամենայն Հայոց Հայրապետի կենաց և Մայր Աթոռ ս. Էջմիածնի պայծառության համար: Ի դիմաց գաղութային իշխանության խոսք առին տ. Օշական քհն. Աշըգյան և Շահե Երեցյան:

Կիրակի, 4 մայիսին, ս. պատարագի ընթացքին քարոզեց տ. Զավեն եպիսկոպոս, Քրիստոսի Համբարձման տոնին մասին: Գաղութային իշխանության տնօրինությամբ, որոշված ըլլալով որ ս. պատարագի մատուցմամբ հոգեհանգիստ կատարվի գաղութի հանգուցյալ բոլոր բարերարներու հոգվոց ի հանգիստ, սրբազան հայրը անդրադարձավ անոնց գործին, ոգեկոչելով ազգային բարերարներու բարի հիշատակը:

Կեսօրին սրբազանն ու տեղվույն հոգևոր հովիվը ազգ. իշխանության անդամներուն հետ ճաշի հրավիրվեցան սուտանահայ գաղութի նախագահ տեր և տիկ. Գր. Պոտուրյաններու տունը:

Երկուշաբթի, 5 մայիսի, երեկոյան ժամը 7-ին, Հայ երիտասարդաց միության ակումբին մեջ տեղի ունեցավ Խարթումի հայոց մանկապարտեզին և նախակրթարանին ամավերջի հանդեսն ու վկայականաց բաշխումը: Մանկապարտեզի 14 փոքրիկներ և նախակրթարանեն երեք աշակերտներ վկայական ստացան: Շուրջ երեք ժամեր տևող այս հանդեսի ընթացքին, աշակերտներ արտասանություններով, երգերով, դրամախոսությամբ ու պարերով, ցույց տվին կրթական միամյա գործունեությունը ազգային վարժարանեն ներս: Տ. Օշական քհն. տեղեկություններ տվավ վարժարանական կյանքին մասին, գնահատեց ուսուցչական կազմին նվիրյալ աշխատանքը և շնորհակալություն հայտնեց ազգ. իշխանության հոգածության համար: Տ. Զավեն սրբազանն ու հոգաբարձության անդամները, վկայականները հանձնեցին ընթացավարտ սաներուն: Սրբազան հայրը խոսեցավ աշակերտներուն հուսկ բանքը և խրատականը ու Խարթումի ազգային վարժարանին նվիրեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի գունավոր, մեծադիր նկարը իբրև հուշանվեր ու «Պահպանիչ»-ով և Տերունական աղթքով ավարտեցավ հանդեսը:

Երեքշաբթի, 6 մայիսի, առավոտյան տ. Զավեն եպիսկ. ընկերակցությամբ տ. Օշական քահանայի, ս. Հարության տոնին առթիվ շնորհավորական այցելության գնաց խպտի ուղղափառ եկեղեցվո պատրիարքական փոխանորդ Անպա Դանիել եպիսկոպոսին և խպտի քույր եկեղեցվո հոգևորականներուն հետ ունեցավ տեսակցություն: Ապա այցելեց Սուտանի կաթոլիկ եկեղեցվո արքեպիսկոպոս Օկոստին Պարոնեի անոր ապարանքին մեջ:

6 մայիսի, երեկոյան, Խարթումի Հայ երիտասարդաց միությունը իր ակումբին մեջ ի պատիվ սրբազան հոր ճաշկերույթ մը սարքած էր: Ճաշկերույթեն առաջ, սրբազան հայրը դասախոսություն մը տվավ հայկական վանքերու և եկեղեցիներու մասին, զանոնք լուսապատկերներով ցուցադրեց, տպավորությունները պատմելով այն բոլոր վայրերեն, եկեղեցիներեն ու վանքերեն ո-

ոնց այցելած էր քանի մը ամիսներ առաջ մեր հայրենիքին զանազան կողմերը:

Շորեքշաբթի, 7 մայիսին, տ. Զավեն եպիսկ. այցելությունը ընդունեց խպտի քույր եկեղեցվո եպիսկ. Անպա Դանիելին և իր հետեվորդներուն, կաթոլիկ եկեղեցվո արքեպիսկ. տ. Օկոստին Պարոնեի և մարոնիթ եկեղեցվո հոգևոր հովիվ վարդապետին և ունեցավ հոգեշահ խոսակցություններ:

Իբրև քաղաքացի, քաղաքավարական այցելության գնաց սուրիական դեսպանին մոտ, որը ճաշի հրավիրեց հյուր սրբազանը իր բնակարանին մեջ:

7 մայիսի, երեկոյան, տ. Զավեն եպիսկ. ներկա եղավ սուտանահայ ազգային իշխանության ժողովի մեկ նիստին և հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները ողջույնի խոսք ուղղեց ժողովականներուն, ապագայի գործունեության վերաբերմամբ:

Ժողովի նիստեն ետք, սրբազան հայրը դասախոսություն մը ևս տվավ այս անգամ սուրբ Երկրին սրբավայրերուն մասին, ու դարձյալ լուսապատկերներու շարք մը ցուցադրեց, ունկնդիրները քայլ առ քայլ առաջնորդելով Քրիստոսի հետքերուն վրայեն, սրբավայրերու բացատրություններով: Շուրջ երկու ժամ տևող այս հավաքույթն ալ ավարտեցավ վերջին ընթրիքով մը և «Պահպանիչ»-ով:

Հոգևոր ապրումներու օրեր, մխիթարության պահեր, հիշատակելի հանդիպումներ ունենալե ետք, տ. Զավեն եպիսկ. Չինչինյան, հինգշաբթի, 8 մայիսին, ճանապարհորդվեցավ դեպի Եգիպտոս:

ԹՂԹԱԿԻՑ